գրքերի տարածողը իր գրքերով լի պայուսակը դրեց մի անկիւնում, նստեց մեզ մօտ եւ սկսեց իր պատառոտած տրեխները բաց անել:

Նրան կոչում էին «Ջին»-Դաւիթ, որ նշանակում է՝ դեւ կամ ատանայ Դաւիթ: Արդեօք իր դէմքի՞ համար, թէ մի այլ պատճառով էր ստացել այդ մականունը, ինձ մնաց անյայտ: Բայց այդքանը պարզ էր, որ նրա կերպարանքը բաւական համապատասխան էր իր ստացած կոչմանը:

Սէր հիւրընկալը, «եղբայրէ Թաթոսը, մի երկար, նիհար, կօրաքամակ մարդ էր, ալեխառն մօրաքով: Նրա իրանի աղեղնաձեւ դիրքը, երեւի, առաջ էր եկել իր արհեստից, որ ստիպում էր նրան միշտ թեքուած մնալ: Նա բուրդ գզող էր: Նրա իրանը իր բուրդ գզելու աղեղի ձեւն էր ստացել: Գիւղացի կնիկները բերում էին նրա մօտ իրանց ոչխարների բուրդը, նա գզում էր, յետոյ առաջ էր եկել իր արհեստից, որ ստիպում էր նրան միշտ թեքուած մնալ: Նա բուրդ դզող էր: Նրա իրանը իր բուրդ դզելու աղեղի ձեւն էր ստացել: Գիւղացի կնիկները բերում էին նրա մօտ իրանց ոչխարների բուրդը, նա գզում էր, յետոյ նրանք տանում էին, թել էին մանում շալեղէն գործուածների համար: Իբրեւ վարձ, եղբայր Թաթոսը ստանում էր բուրդի մի մասը: Վերջին ժամանակներում նրա եկամուտը պակասեց, որովհետեւ նրա մասին լուր տարածուեցաւ, թէ նա նոյնպէս «անհաւատ» է: Գիւղացիք նրա մօտ այլեւս շատ չէին յաճախում:

Եղբայր Թաթոսը ամէն ինչ մեզ համար կարգադրելուց յետոյ եկաւ, նստեց մեզ մօտ: Նա, կրկին անգամ բարեւելով, սկսեց սովորական հարցմունքները՝ թէ որտեղացի՞ ենք, որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում եւ այլն: Նա խօսելու ժամանակ երկու աչքերն եւս խփում էր, ձայնը հազիւ էր լսւում, եւ երկու ձեռքերը ջերմեռանդութեամբ փակում էր: Այդ սովորութիւնը մնացել էր նրա մէջ՝ իրանց ժողովարանում աղօթելու եղանակից: Երբ իմացաւ, որ մենք Աղթամարայ վանքիցն ենք գալիս, նրա դէմքի արտայայտութիւնը ցաւակցական ձեւ ստացաւ: Նա ոչինչ չխօսեց, բայց նրա լուռ շրթունքները կարծես աղօթելիս լինէին՝ «տե՛ր, ողորմի՛ր այդ մոլորեալներին...է:

Սուրբ գրքերի տարածողը սկսեց պատմել Թաթօս եղբօրը ճանապարհին իր հետ պատահած անցքը: Նա աւելի վշտացաւ եւ, խորին կերպով հոգոց հանելով, ասաց.

— Տիրոջ խօսքը առանց հալածանքի չի տարածոի...

Արդէն յայտնի էր, որ մենք գտնւում էինք մի հայ բողոքականի ընտանիքում: